Employment Development Department
State of California

# ՁԵԶ՝

# Ի ՇԱՀ:

Կալիֆոռնիայի Ծրագրեր Գործազուրկների Համար

Գործազրկության Ապահովագրություն

Հաշմանդամության Ապահովագրություն

Վճարովի Ընտանեկան Արձակուրդ

Աշխատուժին Տրամադրվող Ծառայություններ

# Ի շահ ձեզ՝ Կալիֆոռնիայի ծրագրեր գործազուրկների համար

Այս հրապարակումը տեղեկություններ է տրամադրում գործազուրկ կալիֆոռնիացիներին Զբաղվածության զարգացման վարչության (Employment Development Department, EDD) կողմից տրամադրվող ծրագրերի մասին: Սա իրավական փաստաթուղթ չէ և նախատեսված է միայն ընդհանուր տեղեկատվության համար:

Լրացուցիչ տեղեկությունները մատչելի են EDD online (edd.ca.gov) կայքում:


Գործազրկության ապահովագրություն (Unemployment Insurance, UI)........2

UI նպաստներն աշխատավարձի մասնակի փոխհատուցում են տրամադրում այն աշխատողներին, ովքեր գործազուրկ են ոչ իրենց մեղքով:

Հաշմանդամության նահանգային ապահովագրություն (State Disability Insurance, SDI)........13

Հաշմանդամության ապահովագրությունը (Disability Insurance, DI) SDI-ի մաս է կազմում և տրամադրում է աշխատավարձի մասնակի փոխհատուցում այն աշխատողներին, ովքեր ի վիճակի չեն աշխատել աշխատանքին չառնչվող հիվանդության, մարմնական վնասվածքի կամ հղիության պատճառով:

Վճարովի ընտանեկան արձակուրդ (Paid Family Leave, PFL)........14

PFL-ը SDI-ի մաս է կազմում և տրամադրում է աշխատավարձի մասնակի փոխհատուցման նպաստներ այն աշխատողներին, ում անհրաժեշտ է արտարձակուրդ վերցնել, որպեսզի խնամեն ընտանիքի ծանր հիվանդ անդամին կամ կապվեն նոր երեխայի հետ:

Աշխատուժին տրամադրվող ծառայություններ........14

EDD-ի Աշխատուժին տրամադրվող ծառայությունների մասնաճյուղը աշխատանք փնտրողներին եւ գործատուներին մատուցում է մի շարք զբաղվածության ծառայություններ:

Ինչպես ստանալ օգնություն........19

# Գործազրկության Ապահովագրություն (Unemployment Insurance, UI)

UI-ի համար վճարում է ձեր գործատուն, և տրամադրում է աշխատավարձի մասնակի փոխհատուցում, երբ դուք գործազուրկ եք և համապատասխանում եք իրավունակության բոլոր պահանջներին:

## Ով պետք է UI հայց ներկայացնի

Դուք կարող եք հայց ներկայացնել UI նպաստներ ստանալու համար, եթե դուք աշխատանք չունեք կամ կրճատվել են ձեր աշխատանքային ժամերը:

UI նպաստներ ստանալու իրավունք ունենալու համար դուք պետք է վաստակած լինեք բավականաչափ աշխատավարձ հիմնական ժամանակաշրջանում, որպեսզի կարողանաք հայց ներկայացնել, եւ պետք է՝

- Ամբողջապես կամ մասամբ գործազուրկ լինեք
- Գործազուրկ լինեք՝ ոչ ձեր մեղքով
- Ֆիզիկապես ի վիճակի լինեք աշխատելու
- Պատրաստ եւ պատրաստակամ լինեք աշխատանքն անմիջապես ընդունելու
- Ակտիվորեն աշխատանք փնտրեք

## Երբ ներկայացնել հայցը

Դուք կարող եք նպաստների համար դիմել գործազուրկ դառնալուց կամ ձեր աշխատաժամերի կրճատումից անմիջապես հետո: Ձեր հայցը կսկսվի այն ներկայացնելու շաբաթվա կիրակի օրը:

Բոլոր հայցերն ունեն մեկշաբաթյա չվճարվող սպասման ժամանակաշրջան: Սպասման ժամանակաշրջանը չի սկսվի, մինչև չներկայացնեք ձեր հայցը, չհաստատեք նպաստներ ստանալու իրավունակությունը և չհամապատասխանեք իրավունակության բոլոր պահանջներին:

## Ինչ է հարկավոր ներկայացնել

Հայց ներկայացնելու համար անհրաժեշտ է տրամադրել ձեր՝

- անունը (ներառյալ բոլոր անունները, որոնք օգտագործել եք աշխատելու ժամանակաշրջանում) և սոցիալական ապահովության քարտի համարը.
- փոստային և բնակության հասցեները (եթե տարբեր են) և հեռախոսահամարը.
- վերջին գործատուի ամբողջական անունը, հասցեն (փոստային և ֆիզիկական վայրի) և հեռախոսահամարը.
- աշխատանքի վերջին օրը և այլևս չաշխատելու պատճառը (ազատվել եք գործից, դուրս եք եկել աշխատանքից, հեռացվել եք պաշտոնից կամ լքել եք աշխատանքն արհմիության և գործատուի միջև ծագած վեճի պատճառով).
- հայցի ներկայացմանը նախորդող 18 ամսվա աշխատանքի պատմություն, ներառյալ զբաղվածությունը նահանգից դուրս: Ներառեք բոլոր գործատուների անունները, ամսաթվերը և վաստակած աշխատավարձերը.
- նահանգի կողմից տրված վարորդական իրավունքի և կայականի համարը կամ նույնականացման քարտի համարը.
- քաղաքացիությունը և Միացյալ Նահանգներում աշխատելու օրինական իրավունքը հաստատող փաստաթղթեր: Եթե նշեք, որ գրանցված եք Միացյալ Նահանգների
- Քաղաքացիության և ներգաղթի ծառայություններում (United States Citizenship and Immigration Services, USCIS (նախկինում՝ INS)) և ունեք Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվություն:, ապա կպահանջվի ներկայացնել աշխատանքի թույլտվության փաստաթղթի անվանումը և տվյալներ USCIS-ի փաստաթղթից, օրինակ՝ օտարերկրացու գրանցման համարը (Alien Registration Number), քարտի համարը և (կամ) գործողության ավարտի ժամկետը:

**Ծանոթություն.** Ձեր վերջին գործատուի անունը և հասցեն շատ կարևոր են՝ անկախ այն հանգամանքից, թե որքան եք աշխատել այդ գործատուի (գործատուների) համար: Եթե ոչ լրիվ դրույքով եք աշխատել, ներկայացրեք յուրաքանչյուր շաբաթ աշխատած ժամերի քանակը:

**Եթե ծառայել եք զինված ուժերում** վերջին 18 ամսվա ընթացքում, պետք է տեղեկություններ տրամադրեք ձեր DD214 Member Copy 4-ից (DD214 Անդամի Օրինակ 4):

**Եթե աշխատել եք դաշնային կառավարության համար** վերջին 18 ամսվա ընթացքում, պետք է տեղեկություններ տրամադրեք ձեր *Notice to Federal Employees About Unemployment Insurance*, Standard Form 8 ստանդարտ ձևից:

## Զգուշացում

Նպաստներ ստանալու նպատակով կեղծ հայտարարություն անելը կամ տեղեկություններ թաքցնելը կարող է քրեական անհանցագործություն համարվել: Պատիժները կարող են ներառել տուգանքներ, նպաստների կորուստ և (կամ) քրեական հետապնդում: Խարդախության և պատիժների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տես Էջ 12:

## Ծանուցում գործատուին

Երբ UI հայց եք ներկայացնում, ձեր վերջին գործատուն ծանուցվում է այդ մասին: Թեև EDD-ն է որոշում ձեր իրավունակությունը, գործատուները են ֆինանսավորում UI ծրագիրը և, ըստ օրենքի, պարտավոր են տրամադրել ցանկացած տեղեկություն, որը կարող է ազդել նպաստներ ստանալու ձեր իրավունակության վրա:

## Հայցերի տեսակները

Ձեր ներկայացրած հայցը կախված է ձեր գործատուի տեսակից և նահանգից (նահանգներից), որտեղ աշխատել եք: Դուք

ներկայացնելու եք՝

- Կալիֆոռնիա նահանգի սովորական հայց, եթե աշխատել եք միայն Կալիֆոռնիայում, նույնիսկ եթե այժմ ապրում եք Կալիֆոռնիայի սահմաններից դուրս.
- դաշնային հայց, եթե ձեր զբաղվածությունը եղել է քաղծառայողի աշխատանք դաշնային կառավարությունում.
- զինվորական հայց, եթե ծառայել եք Միացյալ Նահանգների Զինված ուժերում.
- համակցված աշխատավարձային հայց, եթե վերջին 18 ամսվա ընթացքում աշխատավարձ եք վաստակել Կալիֆոռնիայում և առնվազն մեկ այլ նահանգում.
- միջնահանգային հայց, եթե ներկայումս բնակվում եք Կալիֆոռնիայում և վերջին 18 ամսվա ընթացքում աշխատել եք միայն մեկ այլ նահանգում: Ձեր հայցը ներկայացրեք ուղղակիորեն մեկ այլ նահանգին, Կոլումբիայի շրջանին, Պուերտո Ռիկոյին կամ Կանադային: Եթե աշխատել եք ԱՄՆ Վիրջինյան կղզիներում, դիմեք EDD-ին 1-800-300-5616 հեռախոսահամարով:

## Ինչպես ներկայացնել հայցը

UI հայց կարող եք ներկայացնել հետևյալ եղանակներից մեկով՝

- **Առցանց**
  UI Online[SM] ամենաարագ և ամենահարմարավետ ձևն է UI հայց ներկայացնելու համար: Սկսելու համար այցելեք UI Online[SM] (**edd.ca.gov/UI_Online**) կայք:

- **Հեռախոսով**
  EDD-ի ներկայացուցչի հետ խոսեք երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 8:00-ից մինչև 12:00 (Խաղաղօվկիանոսյան ժամանակ), բացի նահանգային ոչ աշխատանքային օրերից: UI հեռախոսահամարները տրված են 19-րդ Էջում:

- **Ֆաքսով կամ փոստով**
  Երբ հայց եք ներկայացնում UI Online-ի միջոցով, որոշ հաճախորդներ հրահանգ կստանան EDD-ին իրենց UI դիմումն ուղարկել ֆաքսով կամ փոստով: Այս դեպքում *Unemployment Insurance Application* (DE 1101I) կցուցադրվի ձեզ ձեր դիմումը լրացնելու եւ ներկայացնելու համար:
  Ավելի արագ և անվտանգ մշակման համար ֆաքսով լրացված ձևն ուղարկեք ձևաթղթում նշված համարով: Եթե դուք փոստով եք ուղարկում ձեր UI դիմումը, օգտագործեք ձևաթղթի վրա նշված հասցեն և լրացուցիչ ժամանակ հատկացրեք մշակման համար:

## Հայցի առաջին օրը

Ձեր հայցը կսկսվի այն ներկայացնելու շաբաթվա կիրակի օրը:

## Հայցի վերջին օրը

Ձեր հայցն ավարտվում է շաբաթ օրը՝ հայցը սկսվելուց 52 շաբաթ անց:
Եթե դուք սպառեք ձեր նպաստները նախքան այդ ամսաթիվը, այլևս չեք կարող Կալիֆոռնիայի այլ հայց ներկայացնել մինչև հայցի նպաստի տարվա ավարտը:

Եթե վերջին 18 ամսվա ընթացքում աշխատել եք մեկ այլ նահանգում, հնարավոր է, որ իրավունակ լինեք նոր հայց ներկայացնելու այդ նահանգում:

## Նվազագույն վաստակ՝ վավերական հայց հաստատելու համար

Ձեր բազային ժամանակաշրջանի մեկ եռամսյակում պետք է վաստակած լինեք առնվազն $1300 կամ առնվազն $900՝ ամենաբարձր վաստակի եռամսյակում, և ձեր ընդհանուր բազային ժամանակաշրջանի ամենաբարձր եռամսյակային վաստակի 1,25 պատիկը:

Օրինակ. Եթե ձեր ամենաբարձր վաստակի եռամսյակում վաստակել եք $900, ձեզանից նաև կպահանջվի, որ բազային ժամանակաշրջանում վաստակած լինեք ընդամենը $1125 ($900 x 1.25 = $1125):

## Ինչպես են հաշվարկվում UI նպաստները

Բազային ժամանակաշրջանում ձեզ վճարված ամենաբարձր վաստակի եռամսյակը որոշում է ձեր շաբաթական նպաստի գումարը (ՇՆԳ): ՇՆԳ-ն կարող է լինել շաբաթական $40-ից մինչև $450:

Նպաստի առավելագույն գումարը շաբաթական նպաստի գումարի 26 պատիկն է կամ ընդհանուր բազային ժամանակաշրջանի վաստակի կեսը՝ նայած, թե դրանցից որն է ավելի փոքր:

Ձեր ՇՆԳ-ն հաշվարկելու համար ուսումնասիրեք **Գործազրկության ապահովագրության նպաստների աղյուսակը** 16-րդ էջում:

## Բազային ժամանակաշրջան

Հայցի հիմնավորման համար օգտագործվում են երկու տեսակի բազային ժամանակաշրջաններ՝ ստանդարտ բազային ժամանակաշրջան և այլընտրանքային բազային ժամանակաշրջան:

## Ստանդարտ բազային ժամանակաշրջան (ՍԲԺ)

ՍԲԺ-ն հայցի առաջին օրվանը նախորդող վերջին հինգ ավարտված օրացուցային եռամսյակներից առաջին չորսն է:

Տե՛ս ստորև ներկայացված աղյուսակը: Ստվերագծված մակերեսը ներկայացնում է ստանդարտ բազային ժամանակաշրջանը: Չստվերագծված մակերեսն այն եռամսյակն է, երբ հայցը ներկայացվել է:




## Այլընտրանքային բազային ժամանակաշրջան (ԱԲԺ)

Եթե ստանդարտ բազային ժամանակաշրջանում բավարար չափով եկամուտ չեք ստացել, ապա հնարավոր է, որ համապատասխանեք ԱԲԺ սկզբունքով հայց ներկայացնելու պահանջներին:

ԱԲԺ-ն կազմում է հայցի առաջին օրվանը նախորդող վերջին չորս ավարտված օրացուցային եռամսյակները:

EDD-ն ձեր անունից ավտոմատ կերպով կներկայացնի ԱԲԺ հայց, եթե դուք իրավունակ չեք ՍԲԺ հայցի համար:

Հնարավոր է, որ ձեզնից պահանջեն տրամադրել լրացուցիչ տեղեկություններ աշխատավարձի մասին, որպեսզի EDD-ն կարողանա ճիշտ հաշվարկել ձեր նպաստի գումարը: Եթե դուք ստանում եք *Affidavit of Wages* (DE 23A), տրամադրեք պահանջվող փաստաթղթերը և վերադարձրեք EDD-ին:

**Ծանոթություն.** ԱԲԺ կարող է օգտագործվել **միայն** այն դեպքում, երբ ստանդարտ բազային ժամանակաշրջանում բավարար աշխատավարձ չի ստացվել դիմումը կազմելու համար:

Տե՛ս ստորև ներկայացված աղյուսակը: Ստվերագծված մակերեսը ներկայացնում է ԱԲԺ-ն: Չստվերագծված մակերեսն այն եռամսյակն է, երբ հայցը ներկայացվել է:



## Սպասման ժամանակաշրջան
Գործազրկության ապահովագրության հայցերն ունեն պարտադիր մեկ շաբաթ տևողությամբ չվճարվող սպասման ժամանակաշրջան: Այս սպասման ժամանակաշրջանը հիմնականում ուժի մեջ է մտնում հայցի առաջին իրավունակ շաբաթը և նախքան նպաստների վճարումը: Մի հապաղեք հայցներկայացնել, քանզի չի կարող տրամադրվել սպասման ժամանակաշրջան, քանի դեռ հայցը չի ներկայացվել:

## Ինչպես հաստատել նպաստների համար իրավունակությունը
Սպասման ժամանակաշրջան տրամադրելու և նպաստի վճարումներ ստանալու համար պետք է համապատասխանեք իրավունակության բոլոր պահանջներին և յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ հաստատեքնպաստներստանալուիրավունակությունը:

Գոյությունունինպաստների համար իրավունակությունը հաստատելու երեք եղանակ՝

- UI Online[SM] **(edd.ca.gov/UI_Online)**
  Սանպաստներիհամարիրավունակությունըհաստատելունաշխատանքիուաշխատավարձի մասին զեկուցելու ամենաարագ ձևն է: UI Online օգտագործելու համար պետք է ստեղծեք ապահով մուտքի տվյալներ Benefit Programs Online (առցանց նպաստների ծրագրեր) համակարգի միջոցով և անցնեք UI Online-ի համար մեկանգամյա գրանցում:

  Որպես հավելյալ հարմարավետություն՝ UI Online Mobile[SM] մատչելի է շարժական սարքերի համար:
- EDD Tele-Cert[SM] . 1-866-333-4606
  Իրավունակությունը հաստատեք հեռախոսով՝ զանգահարելով 1-866-333-4606 հեռախոսահամարով: Ընտրեք 2-րդ տարբերակը և հետևեք հրահանգներին: EDD Tele- Cert մուտք գործելու համար պետք է PIN ստեղծեք:
- **Փոստ** Լրացրեք, ստորագրեք և փոստով ուղարկեք *Continued Claim Form* (DE 4581) EDD-ին:

  **Ծանոթություն** Արագ մշակման համար հաստատեք UI Online-ի կամ EDD Tele-Cert-ի միջոցով:

## Վճարումներ
Վճարումները կատարվում են այն բանից հետո,երբ դուք հաստատում եք նպաստներ ստանալուձեր իրավունակությունը և շարունակում եք համապատասխանել իրավունակության բոլոր պահանջներին նպաստներ պահանջած յուրաքանչյուր շաբաթվա համար:

Դուք կարող եք ընտրել նպաստի վճարները ստանալուձեր տարբերակը: EDD-ն տալիս է EDD վճարները EDD Debit Card[SM] միջոցով: EDD Debit Card-ը ձեր նպաստները ստանալու ամենաարագ եւ -ի կամ չեկ ամենա-ապահով տարբերակն է: Սակայն, դուք պարտավոր չեք ընդունել այդ տարբերակը: Ձեր հայցը ներկայացնելուց հետո կապ հաստատեք EDD-ի հետ, եթե ցանկանում եք ձեր նպաստները ստանալ թղթային չեկմիջոցով:

EDD Debit Card-ը վավերական է երեք տարի ժամկետով եւ օգտագործվում է Հաշմանդամության Ապահովագրության (Disability Insurance) (DI), Վճարովի Ընտանեկան Արձակուրդի (Paid Family Leave) (PFL), եւ Գործազրկության Ապահովագրության (Unemployment Insurance) (UI) բոլոր նպաստների համար:

Եթե դուք ունեք EDDDebit Card նախկին DI, PFL, or UI հայցերից, որը դեռեւս վավերական է, ապա ձեզ չի տրամադրվի նոր քարտ մինչեւ տվյալ քարտի գործողության ժամկետի ավարտը: Եթե ձեզ անհրաժեշտ է քարտի փոխանակում, կապ հաստատեք Bank of America EDD Debit Card Հաճախորդների ծառայությունների բաժնի հետ՝ զանգահարելով 1-866-692-9374 կամ 1-866-656-5913:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **Bank of America, EDD Debit Card** առ ցան ց (bankofamerica.com/EDDCard).

## Հարկային պահանջներ
UI նպաստները հարկվում են դաշնային եկամտահարկով, սակայն ազատված են Կալիֆոռնիայի նահանգային եկամտահարկից: Ամեն անգամ, երբ դուք հաստատում եք նպաստներ ստանալու ձեր իրավունակությունը, կարող եք ձեր շաբաթական նպաստի վճարից պահել 10 տոկոս դաշնային եկամտահարկը: Հակառակ դեպքում, ձեզնից հնարավոր է պահանջվի հարկը վճարել տարվա վերջին, երբ ներկայացնում եք ձեր հարկային հայտարարագիրը:

Յուրաքանչյուր հունվար ամսին EDD-ն փոստով ուղարկում է 1099G ձևն այն անձանց, ովքեր նախորդ օրացուցային տարվա ընթացքում ստացել են UI նպաստներ: Չևաթուղթն օգտագործեք ձեր դաշնային հարկային հայտարարագրում կարևոր հարկային տեղեկություններ հայտնելու համար: Դուք կարող եք վերջին հինգ տարվա 1099G ձևի տեղեկությունները տեսնել և դրանց կրկնօրինակները պահանջել UI Online-ի միջոցով կամ զանգահարելով 1-866-401-2849:

## Երեխայի ապրուստավճարին վերաբերող պարտավորություններ

Ձեր UI նպաստները կարող են կրճատվել, եթե դուք պարտավոր եք երեխայի ապրուստավճարի վճարումներ կատարել դատարանին, շրջանային դատախազի գրասենյակին կամ երեխայի ալիմենտի հարկադիր գանձման այլ գործակալության:

## Զեկուցեք վաստակած գումարների մասին

Ձեզանից պահանջվում է EDD-ին զեկուցել **բոլոր** աշխատանքների, աշխատավարձերի և այլ եկամուտների մասին այն շաբաթվա ընթացքում, երբ դրանք վաստակել եք, և ոչ թե այն ժամանակ, երբ ստացել եք վճարը: Ձեր վաստակած գումարի մասին պատշաճ կերպով չզեկուցելը կարող է հանգեցնել գերավճարների և տուգանքների:

Զեկուցվող եկամտի տեսակները՝

- Հատավարձով աշխատանք
- Պարապուրդի համար տրվող վճար
- Երդվյալատենակալներիվարձատրություն
- Միջնորդավճարներ
- Վկաների վարձատրություն
- Վերաօգտագործման վճար
- Ոչ աշխատանքային օրը կատարված աշխատանքի վարձատրություն
- Հետագաօգտագործմանիրավունքի համար տրվողհոնորարներ
- Կրկնական կատարումներիհամար տրվողհեղինակայինհոնորարներ
- Պարգև
- Արտադրական վնասվածքի փոխհատուցման թոշակ, կենսաթոշակային նպաստ, տարեվճար
- Արձակուրդային վճար
- Փոխհատուցում առանց նախնականծանուցմանազատելու համար
- Պարգևավճարներ
- Թեյավճարներ
- Ինքնազբաղվածությանեկամուտ
- Գործադուլավորներինտրվող նպաստներ և պիկետավորների վճարներ
- Սպասմանվճար
- Մերձավորի մահվան կապակցությամբտրվողվճար
- Աշխատավարձիպարտքիվճարում
- Վճարովիարձակուրդառողջական վիճակիպատճառով

**Ծանոթություն** Դուք պարտավոր եք հայտնել պարենավորման և կացարանի, կերակուրների համար տրվող և ցանկացած այլ վճարների մասին, որոնք աշխատելու ժամանակաշրջանում ստանում եք փողի փոխարեն: Եթե վստահաբար չգիտեք աշխատավարձերի մասինզեկուցելուկարգը, դիմեք EDD-ի գրասենյակ:

## Կենսաթոշակ կամ կենսաթոշակային նպաստ

UI նպաստները կարող են կրճատվել, եթե նախկին աշխատանքի հիման վրա ստանում եք կենսաթոշակ, կենսաթոշակայիննպաստ, տարեվճար կամ այլ նմանատիպ վճարներ:

Սոցիալական ապահովության նպաստները չեն հանվում UI նպաստներից, և անհրաժեշտությունչկա դրանց մասին հայտնելու EDD-ին:

## Ոչ լրիվ դրույքով աշխատանք

Եթե լրիվ դրույքից քիչ եք աշխատում, ձեզնից պահանջվում է տեղեկացնել այդ աշխատանքի մասին EDD-ին: Այնուամենայնիվ կարող եք մասնակի UI նպաստներ ստանալուիրավունքունենալ:Շաբաթվաընթացքումվաստակածընդհանուր համախառն եկամուտների առաջին 25 դոլարը կամ 25 տոկոսը (նայած, թե որն է ավելի մեծ) չի հաշվարկվի ձեր նպաստի գումարի համար: Մնացած գումարը կհանվի ձեր շաբաթական նպաստի գումարից:

Օրինակ 1.

Ձեր շաբաթական նպաստի գումարը $50 է: Դուք վաստակում եք $30: Դուք պետք է զեկուցեք $30, սակայն առաջին $25-ը չի հաշվարկվում՝ շաբաթական նպաստի գումարից հանելով $5: Դուք կստանաք $45 ($50 հանած $5)՝ որպես UI նպաստ:

Օրինակ 2.

Ձեր շաբաթական նպաստի գումարը $400 է: Դուք վաստակում եք $200: Դուք պետք է զեկուցեք $200, սակայն առաջին 25 տոկոսը ($50) չի հաշվարկվում՝ շաբաթական նպաստի գումարից հանելով $150: Դուք կստանաք $250 ($400 հանած $150)՝ որպես UI նպաստ:

## Ինչպես է որոշվում ձեր իրավունակությունը

Իրավունակ լինելու համար պետք է լինեք՝

- Գործազուրկ՝ ոչ ձեր մեղքով.
- ֆիզիկապես աշխատունակ.
- պատրաստակամ՝ աշխատանք ընդունելու.
- ակտիվորեն աշխատանք փնտրող:

Եթե ձեզ գործից հանել են, ապա համարվում եք գործազուրկ ոչ ձեր մեղքով:

Եթե ինքներդ եք դուրս եկել ձեր վերջին աշխատանքից, ձեզ ազատել են կամ գործազուրկ եք դարձել գործադուլի կամ լոկաուտի պատճառով, EDD-ն հեռախոսային հարցազրույց կնշանակի ձեզ հետ, որպեսզի տեղեկություններ հավաքի այլևս չաշխատելու պատճառի մասին: Ձեր UI նպաստները չեն կարող վճարվել մինչև հեռախոսային հարցազրույցի անցկացումը, նպաստների համար ձեր իրավունակության հաստատումը և EDD-ի կողմից ձեր իրավունակության որոշումը:

Դուք իրավունք ունեք հավելյալ ժամանակ խնդրելու տեղեկություններ հավաքելու, վկաների հետ կապ հաստատելու կամ ներկայացուցչի խորհրդատվությունը ստանալու համար: Եթե իրավունակության խնդիրը ներառում է գործատուին, EDD-ն կարող է կապվել գործատուի հետ:

Եթե ձեզ գրավոր խնդրանք է ուղարկվել լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու համար, և դուք պատասխանը ուղարկել եք փոստով, EDD-ի հարցազրուցավարը կօգտագործի տրամադրված տեղեկությունները ձեր իրավունակությունը որոշելու համար:

Եթե հայցի որևէ պահին ձեզ որևէ պատճառով մերժում են նպաստ տրամադրելու հարցում, ներառյալ հայցի հիմնավորման համար անբավարար աշխատավարձերը, ապա գրավոր *Notice of Determination* (DE 1080CZ) կուղարկվի ձեզ՝ բացատրելով պատճառը, ինչպես նաև բողոքարկման ձեր իրավունքները:

**Կարևոր է.** Ձեր նպաստները կարող են ուշացվել կամ մերժվել, եթե չմասնակցեք հարցազրույցին կամ չներկայացնեք պահանջվող փաստաթղթերը: EDD-ն իրավունակության որոշում կկայացնի առկա տեղեկությունների հիման վրա:

## Բողոքարկման գործընթաց

Եթե ձեզ մերժել են տրամադրել UI նպաստներ, դուք օրինական իրավունք ունեք բողոքարկելու որոշումը՝ լրացնելով և ուղարկելով *Appeal Form* (DE 1000M): Որպեսզի այն համարվի ժամանակին ներկայացված, այն պետք է ուղարկեք *Notice of Determination* (DE 1080CZ)-ի ուղարկման ամսաթվից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: Եթե այն չուղարկեք մինչև 30-օրյա վերջնաժամկետը, դուք դեռևս կարող եք բողոքարկել, սակայն պետք է ցույց տաք, որ հարգելի պատճառունեիք ուշացման համար:

Ձեր բողոքարկումը կլսվի վարչական դատարանի անկախ դատավորի կողմից: Լսումները ոչ պաշտոնական բնույթ են կրում, բայց բոլոր վկայություններն արվում են երդմամբ և ենթակա են խաչաձև հարցաքննության: Բողոքարկման գրասենյակը ձեզ կտեղեկացնի լսումների անցկացման ժամանակի և վայրի մասին:

Դուք իրավունք ունեք լսումներից առաջ ուսումնասիրելու բողոքարկմանը վերաբերող բոլոր փաստաթղթերը: Այդ փաստաթղթերը տրամադրում է Կալիֆոռնիա նահանգի Գործազրկության ապահովագրության հարցերի բողոքարկման խորհուրդը (California Unemployment Insurance Appeals Board, CUIAB): Լսմանը պատրաստվելու համար կարող եք EDD-ից փաստաթղթեր խնդրել:

Լսման ժամանակ կարող եք ինքներդ ներկայացնել ձեզ կամ ներկայացվել արհմիության պաշտոնյայի, փաստաբանի կամ մեկ այլ անձի կողմից, ում դուք ընտրեք: Դուք կարող եք ձեզ հետ բերել գործին առնչվող փաստաթղթեր՝ ձեր գործին աջակցելու համար:

Լսումից հետո ձեզ կուղարկվի վարչական գործերով դատավորի որոշումը: Եթե բավարարված չմնաք, կարող եք երկրորդ մակարդակի բողոքարկում ներկայացնել CUIAB-ին:

Տեղեկությունների համար, թե ինչպես է կիրառվում UI օրենսգիրքը, ներառյալ ընթացիկ գործերի ուսումնասիրությունը, տես **Benefit Determination Guide** (edd.ca.gov/uibdg) առցանց:

**Կարևոր**՝ Դուք պարտավոր եք շարունակել հաստատել նպաստներ ստանալու իրավունակությունը, քանի դեռ ձեր հայցը բողոքարկման գործընթացում է: Եթե սկզբնական որոշումը փոփոխվի, EDD-ն արագ կերպով կփոխանցի ձեզ չվճարված գումարները: **Օրենքներին չհետևելը կարող է հանգեցնել նպաստների մերժման կամ ուշացման:**

## Հայցի չեղարկում

Դուք կարող եք չեղարկել հայցը, եթե համապատասխանում եք հետևյալ **բոլոր** չափանիշներին՝

- ոչ մի նպաստ դեռևս չի վճարվել.
- ձեզ չեն որակազրկել նպաստներ ստանալու իրավունակության հետ կապված խնդրի պատճառով.
- հայցի կապակցությամբ գերավճարներ չեն սահմանվել.
- դուք տեղեկացրել եք EDD-ին նախքան 52-շաբաթյա նպաստի տարվա ավարտը:

Հենց որ հայցը չեղարկվի, այն չի կարող կրկին սահմանվել միևնույն սկսվելու օրով: Դուք պետք է նոր հայց ներկայացնեք ավելի ուշ մեկնարկի օրով:

## Աշխատողներ, ովքեր ապահովագրված չեն գործազրկության ապահովագրությամբ

Որպես կանոն՝ ապահովագրություն չի տրվում աշխատողների հետևյալ խմբերին՝

- ընտրված պաշտոնյաներ.
- ինքնազբաղ անձինք, եթե նրանք ընդգրկված չեն ընտրովի ապահովագրությունում.
- ուսանողներ, ովքեր գրանցված են և մշտապես հաճախում են դասընթացների այն դպրոցներում կամ կրթական հաստատություններում, որտեղ աշխատում են.
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՍՊԸ) անդամները, ովքեր համարվում են գործընկերներ՝ դաշնային եկամտահարկի հայտարարագրի նպատակներով.
- ուսանողի կինը կամ ամուսինը, ով աշխատում է կրթական հաստատության զբաղվածության ծրագրում, որը տրամադրվում է ուսանողին ֆինանսական օգնություն հատկացնելու նպատակով.
- իրենց երեխաների մոտ աշխատող ծնողները.
- կանայք և ամուսինները, ովքեր աշխատում են մեկը մյուսի մոտ.
- նահանգային լիցենզիա ունեցող որոշվաճառականներ, ում միայն միջնորդավարձեր են վճարվում.
- գոլֆի մականներ ու գնդակներ մատակարարողներ և ձիավարժներ:

Եթե չգիտեք՝ ձեզ ապահովագրություն հասնում է, թե ոչ, մի հրաժարվեք ձեր իրավունքներից: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դիմեք EDD-ի գրասենյակ:

## Ընտրովի ապահովագրություն

Որոշ դեպքերում այն անձանց գործատուները, ում ծառայությունները ապահովագրված չեն, կարող են ընտրել ապահովագրել այդ ծառայությունները: Եթե վստահ չեք՝ արդյոք այդպիսի նպաստներ ստանալու իրավունակ եք, դիմեք EDD-ի գրասենյակ:

## Պահանջեք հայցի տպագիր օրինակը

Դուք կարող եք ձեր հայցի տպագիր տարբերակը պահանջել հետևյալ միջոցներից մեկով՝

- Ստեղծեք հաշիվ՝ այցելելով UI Online (edd.ca.gov/UI_Online): Ընտրեք **Claim History** (Հայցի պատմություն) և տպեք:
- Զանգահարեք EDD-ին 1-800-300-5616 հեռախոսահամարով:

## Հատուկ ծրագրեր

### Կալիֆոռնիա նահանգի Վերապատրաստման նպաստներ (California Training Benefits, CTB)

Եթե դուք դպրոց կամ վերապատրաստման դասընթացներ եք հաճախում UI նպաստներ ստանալու ընթացքում, ապա հնարավոր է, որ իրավունք ունենաք օգտվելու CTB-ից:

Իրավունակության դեպքում կարող եք ավելի խորացնել ձեր կրթությունը, բարելավել հմտությունները և (կամ) սովորել նոր արհեստ, մինչ հաճախում եք EDD-ի կողմից հաստատված վերապատրաստման կամ կրթական ծրագրի՝ այսօրվա աշխատաշուկայում ավելի մրցունակ լինելու համար:

Մինչ դուք դպրոց կամ վերապատրաստման դասընթացների եք հաճախում, ձեզ կազատեն աշխատանքի համար պատրաստ լինելու, ակտիվորեն աշխատանք փնտրելու և աշխատանք ընդունելու պահանջներից: Հնարավոր է, որ դուք իրավունակ լինեք նաև նպաստների լրացուցիչ շաբաթվա համար: Իմացեք ավելին առցանց այցելելով California Training Benefits (edd.ca.gov/unemployment/California_Training_Benefits.htm) կայք:

**Ծանոթություն**. EDD-ն **չի** ապահովագրում կրթության կամ վերապատրաստման հետ կապված որևէ ծախս, օրինակ՝ ուսման վարձը, վճարները, գրքերը, պարագաները կամ փոխադրումը: Այնուամենայնիվ, կան նահանգային, դաշնային կամ գործատուների ծրագրեր, որոնք կարող են ֆինանսավորել ձեր կրթությունն ու վերապատրաստումը:

## Վերապատրաստման երկարաձգում (Training Extension, TE)

TE-ն տրամադրում է լրացուցիչ նպաստներ այն անձանց, ում հաստատել են CTB ստանալու համար, մինչ նրանք շարունակում են հաճախել դպրոց կամ վերապատրաստման դասընթացներ: Միայն մեկ TE է թույլատրվում CTB-ի կողմից հաստատված յուրաքանչյուր վերապատրաստման ժամանակաշրջանի համար:

Եթե հետաքրքրված եք, պետք է նախքան 16-րդ շաբաթը UI նպաստի ստանալը դիմեք EDD-ին՝ TE-ի մասին տեղեկանալու համար: Այն հայցերի դեպքում, որոնց նպաստներին 16 շաբաթից պակաս է մնացել, դուք պետք է դիմեք EDD-ին, նախքան հայցի հաշվեկշիռը կիսանի զրոյի:

## Գործազրկության նպաստներ տարերային աղետների դեպքում (Disaster Unemployment Assistance, DUA)

Դաշնային DUA ծրագիրը ֆինանսական աջակցություն է տրամադրում այն անձանց, ում զբաղվածությունը կամ ինքնազբաղվածությունը կորցվել կամ ընդհատվել է խոշոր աղետի ուղղակի հետևանքով, և ովքեր իրավունակ **չեն** սովորական UI նպաստների համար: Այս նպաստները մատչելի են միայն այն դեպքում, երբ Միացյալ Նահանգների Նախագահը խոշոր աղետ է հայտարարում և հասանելի է դարձնում այս կոնկրետ աջակցությունը:

Եթե DUA նպաստները մատչելի են, տեղեկությունը կիրապարակվի EDD (edd.ca.gov) կայքում.

## Ճյուղային համարվողականության հարցերում օգնության ծրագիր (Trade Adjustment Assistance, TAA)/ Աշխատանքի վերականգման և ճյուղային համարվողականության հարցերում օգնության ծրագիր (Re-employment Trade Adjustment Assistance, RTAA)

TAA ծրագիրը դաշնային ֆինանսավորմամբ իրագործվող ծրագիր է, որը վերապատրաստման դասընթացներ և վերապատրաստման հետ առնչվող նպաստներ ու ծառայություններ է տրամադրում այն բանվորներին, ում ԱՄՆ-ի Աշխատանքի նախարարությունը (Department of Labor) վկայագրել է որպես աշխատանքը կորցրած, կամ ում աշխատաժամերն ու աշխատավարձերը կրճատվել են արտասահմանից ներմուծումների աճի կամ արտադրությունն արտասահմանյան երկիր տեղափոխելու արդյունքում:

RTAA ծրագիրը աշխատավարձի լրահատկացումներ է տրամադրում 50 կամ ավելի բարձր տարիքի անձանց, ովքեր վերադառնում են մի աշխատանքի, որով ավելի քիչ են վարձատրվում, քան առևտրային գործունեությունից տուժած իրենց նախկին աշխատանքով:

## Երկարաձգված նպաստներ

Երկարաձգված նպաստներ տրվում են այն բանվորներին, ովքեր սպառել են գործազրկության ապահովագրության սովորական նպաստները, երբ գործազրկության մակարդակը հավասարվում է նահանգային և (կամ) դաշնայինօրենսդրությամբ սահմանված որոշակի տոկոսի կամ գերազանցում է այդ տոկոսը, կամ երբ դաշնային կառավարությունը հաստատում է երկարաձգված նպաստների մասին նախատուկ օրենք:

## Երկաթուղայինների գործազրկության նպաստներ

Երկաթուղագործները կարող են նաև հայցել ԱՄՆ «Երկաթուղայինների գործազրկության ապահովագրության մասին» օրենքով նախատեսված նպաստներ: Այս ծրագիրն իրականացվում է ԱՄՆ-ի Երկաթուղայինների կենսաթոշակային ապահովման խորհրդի (Railroad Retirement Board, RRB) վերահսկողությամբ:

Հայց ներկայացնելու համար զանգահարեք 1-877-772-5772 անվճար հեռախոսահամարով ժամը 9:00-ից մինչև 15:30, երկուշաբթիից մինչև ուրբաթ՝ RRB-ի ներկայացուցչի հետ խոսելու համար, կամ ներկայացրեք առցանց **RRB** (rrb.gov) հասցեով:

## Գործազրկության ապահովագրության ոլորտում խարդախության կանխում և հայտնաբերում

Գաղտնիության զարգացման վարչությունը՝ EDD շատ լրջորեն է վերաբերվում անձնական և գաղտնի տեղեկությունների անվտանգությանը: Հետևաբար, մեզ ներկայացված բոլոր տեղեկությունները ծածկագրված են: Ստեղծվում է լրացուցիչ պաշտպանություն՝ ձեր անձնական տեղեկությունները ինքնակոչի խարդախությունից և անձնական տվյալների հափշտակումից պաշտպանելու համար:

Ինքնակոչի խարդախությունը տեղի է ունենում այն դեպքում, երբ որևէ մեկը միտումնավոր կերպով UI հայց է ներկայացնում՝ օգտագործելով մեկ այլ անձի աշխատանքային կամ անձնական տվյալները: EDD-ն ակտիվորեն հետաքննում է ինքնակոչների խարդախության դեպքերը և ստանձնել է օրինական հայցվորների ինքնությունը պաշտպանելու պարտավորություն:

Եթե EDD-ն կասկածի, որ հնարավոր են ինքնության նույնականացման խնդիրներ, ձեզ գրավոր խնդրանք կուղարկվի հաստատելու ձեր կողմից տրամադրված տեղեկությունները: Մենք կկապվենք նաև ձեր նախկին գործատուին (գործատուներին) և պետական մարմիններին փաստաթղթերը և ձեր կողմից ներկայացված որևէ տեղեկություն ստուգելու համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար ներբեռնեք *Protect Your Identity and Stop Unemployment Insurance Imposter Fraud* (DE 2360EE) (PDF) գրքույկը (edd.ca.gov/pdf_pub_ctr/de2360ee.pdf):

UI խարդախության վերաբերյալ հայտնելու համար այցելեք **Ask EDD** (askedd.edd.ca.gov) կայքը և ընտրեք **Report Fraud** (Հայտնեք խարդախության մասին)՝ «Զեկուցում խարդախության մասին» ձևն առցանց ներկայացնելու համար, կամ զանգահարեք EDD խարդախության թեժ գծին 1-800-229-6297 անվճար հեռախոսահամարով:

## Տուգանքներ

